# ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԳՈՒՅՔԸ

## Ակնկալվող կահույքի նկարագիրը

Աշխատասենյակը՝




### 1. Ընդհանուր մեծ կահույք՝

Ընդհանուր կահույքը բաղկացած է 5 պարզ պահարաններից և հարթակից: Կահույքը պետք է դրվի պատի տակ և հարմարեցվի պատերի գոյություն ունեցող անկյուններին:

# Ընդհանուր մեծ կահույք







**Հարթակը** պետք է ունենա 4.840 մետր երկարություն 0.650 մետր լայնություն և 0.180 մետր բարձրություն: Իրականացվի լամինացված DSP-ով (հաստությունը 1,80 սմ), հարթակի տակ ստեղծվի այնպիսի ամրություն, որ դիմանա մարդկանց ծանրությանը, ամրության համար կարող են օգտագործվել կամ DSP-ով կողեր կամ կահույքի համար նախատեսված ոտքերով: Հարթակի երեսի կողմից պետք է պտուտակներ չօգտագործվեն:

**«Պ-1»** պահարանը կունենա 1.000 մետր երկարություն, 0.550 մետր լայնություն և 2.036 մետր բարձրություն, 5 բացվող դուռ ձևը և չափերը ըստ գծագրերի: Պահարանը տեղադրվում է հարթակի վրա:

**«Պ-2»** պահարանը դրվում է **«Պ-1»** պահարանի կողքը և ունի նույն բարձրությունը 2.036 մետր և նույն խորությունը 0.550 մետր, լայնությունը 0.270 մետր: Դիմացից պետք է ունենա բաց դարակներ պահարանի խորության կեսի չափու և մնացած հատվածի համար կողքից բացվող 1 դուռ ամբողջ բարձրությամբ, դռան հատվածի ներսի բաժանման չափը գծագրերի մեջ կտրվածք I-I-ում: Ձևը և չափերը ըստ գծագրերի:

**«Պ-2₁»** պահարանը ձևով և չափերով նման է **«Պ-2»** պահարանին ուղղակի պետք է իրականացվի հայելային ձևով: Ձևը և չափերը ըստ գծագրերի:










Կտրվածք I-I




Կտրվածք II-II

«**Պ-3**» պահարանը պատի անկյունայինմասում կախվող պահարան է, մյուս կողմով կպնելու է «**Պ-2**$_1$» պահարանին, չափերը՝ երկարություն 1.270 մետր, լայնություն 0.330 մետր և բարձրություն 0.766 մետր: Ունի 3 բացվող դուռ, ձևը և չափերը ըստ գծագրերի, :

«**Պ-4**» պահարանը նախատեսված է թաց անկյունի համար, վերևի մասը պետք է ծածկվի սեղանածածկով: Կունենա հետևյալ չափերը երկարությունը 1.870 մետր, լայնությունը 0.410 մետր և բարձրություն 0.750 մետր: Ձախ կողմում ունի 3 դուռ, աջ կողմում նեղ բաց դեկորատիվ դարակներ, հարմարեցված պատի անկյուններին: Ավելի մանրամասնությունների ձևի և չաձի համար նայել գծագրերում, կտրվածք II – II:

**Օգտագործվող նյութերը՝**

- Փայտային ֆակտուրայով(բնական կաղին) լամինացված DSP «EGGER» (H3303 ST10 Natural Oak) կամ համարժեք, լամինատի հաստությունը՝ 18մմ:
- Հարթ սպիտակ փայլուն լամինացված DSP «EGGER» կամ համարժեք, լամինատի հաստությունը՝ 18մմ:
- Եզրաշերտերը՝ PVS տեսակի 1 մմ հաստությամբ:
- Ծխնիները վակումային Samet կամ համարժեք:
- Դռները բացելու համար օգտագործել սեղման տարբերակով բացող որակյալ մեխանիզմներ:
- Կողպեք՝ պահարանների բոլոր դռների վրա տեղադրել հուսալի կողպեքներ:
- Սեղանածածկը փայտային ֆակտուրայով՝ բնական կաղին (**Slotex One 3829**) կամ համարժեք:

Սեղանածածկ **Slotex One 3829**






H3303 ST10 Natural Hamilton

Լամինացված DSP-ների գույնային համադրության համար նայել գծագրերին և նկարներին:





**Կահույքի տեղափոխման և տեղադրման հետ կապված բոլոր ծախսերը՝ մատակարարի կողմից:**

**Տեսքը և չափերի այլ դետալներ՝ համաձայն կից նկարների, գծագրերի կամ պատվիրատուի հետ:**